ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/25» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Մկրտչյան
Հանձնաժողովի անդամներ՝	Կ. Արամյան, Շ. Մատինյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Բ. Արամյան

Էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին

(Ա. Մկրտչյան)

1. Փաստաթղթերի գնահատման՝

- վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321/1 սենյակ.

-օրը՝ 15.01.2019թ., -ժամը՝ 10:00

Ընդունել ի գիտություն որ.

1.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը և «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ 09.01.2019թ. հարցում է ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, որի տրամադրված եզրակացության համաձայն՝ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ն հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 21000 /քսանմեկ հազար/ ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը:

1.2 Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 44-րդ կետով և «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 20-րդ կետով՝ որոշեց մերժել «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի հայտը 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով և «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ նշված չափաբաժինների մասով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Հ/Հ	Մասնակցի անվանումը	տվյալները
1	«Մաստեր Սթայլ» ՍՊԸ	անբավարար
2	«Մաստեր Սթայլ» ՍՊԸ	բավարար
3	«Մաստեր Սթայլ» ՍՊԸ	անբավարար
4	«Մաստեր Սթայլ» ՍՊԸ	անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ-3 դեմ-0

2. «Գնումների մասին» օրենքի պահանջների համաձայն գնահատող հանձնաժողովը որոշեց, որպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ հայտարարել 2-րդ չափաբաժնի մասով «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3 դեմ-0

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ա. Մկրտչյան

Անդամներ՝ ---------- Կ. Արամյան

---------- Շ. Մատինյան

Քարտուղար՝ ---------- Բ. Արամյան